


Ցիհալտորին



Ցիհալտորինը գոյություն ունի իզոմերների խառնուրդի տեսքով, որոնցից ամենաակտիվը լյամբդա-ցիհալտորինն է:

Լյամբդա-ցիհալտորինը սինթետիկ պիրետրոիդ միջատասպան և տզասպան նյութ է, որն օգտագործվում է գյուղատնտեսությունում, տնային տնտեսությունում, շենքերի և շինությունների շրջակայքում, սննդամթերքի պաշտպանության նպատակով, բույսերի հիվանդություն փոխանցողների և վասասատուների դեմ պայքարում:

Այն շատ արդյունավետ է մի շարք վասասատու միջատների՝ ուտիճների, կոլորադյան բզեզների, բզեզների թրթուրների և հասուն առանձնյակների, կնճիթավոր ճպուռների (ցիկադաներ), թեփուկաթևավորների թրթուրների և հասուն առանձնյակների, բուսակեր բզեզների, մարմարյա բզեզների, թրիպսների և սպիտակաթևիկների դեմ պայքարում:



Ընդունված անվանումը	լյամբդա-ցիհալտորին
Գրանցման համարը	91465-08-6
Քիմիական բանաձևը	C23H19ClF3NO3
Քիմիական անվանումը	ալֆա-ցիանային-3-ֆենօքսիբենզիլային էթեր 3-(2-քլոր -3,3,3-տրիֆտորաբուտենիլ)-2,2-դիմեթիլցիկլոպրոպան կարբոնաթթու
Ագրեգատային վիճակը	պինդ/հեղուկ

2023թ.-ին Հայաստանը ներկրել է լյամբդա-ցիհալտորին պարունակող թունաքիմիկատներ հետևյալ առևտրային անվանումներով՝ Ագրիլտորին ԱԼՍ, Ագրիլտորին ԿԿՊ, Ազադ Կարատեքս, Այքոն, Անտիգուսին, Բրեյկ, Գիլյոտին, Գրանիտ Ուլտրա, Էուրեկա, Էֆորիա, Էֆորտ, Լամդեքս, Լաստ, Կարատ, Կարատե Ջեոն, Կարատել ԻՀ, Կարատին, Կարատո, Կարատոշանս ԷԽ, Կարացիդ, Կունգֆու, Շուտեռ, Սամբո, Վալսամբա Էլիտ, Քինգ 5 ԽԷ:




Լյամբդա-ցիհալտորին պարունակող թունաքիմիկատները Հայաստան են ներկրվում հետևյալ երկրներից՝ Թուրքիա, Չինաստան, Իսրայել, Հնդկաստան, Մեքսիկա, Շվեյցարիա, Ուկրաինա, Ռուսաստան, Սաուդյան Արաբիա:



Գործողության մեխանիզմը

Ցիհալոտրինը խաթարում է օրգանիզմի նյարդային համակարգի գործառույթը:

Այն արդյունավետ է լայն սպեկտրի տերևակեր և ծծող փասաստունների՝ ներառյալ գարու, բամբակի, կարտոֆիլի, բանջարաբոստանային և պտղատու մշակաբույսերի, աշնանացան հլածուկի, առվույտի, բրնձի փասաստու միջատների՝ լվիճների, բզեզների և թրթուրների դեմ պայքարում: Ոչնչացնում կամ ճնշում է տզերի զարգացումը: Արդյունավետորեն կիրառվում է ճանճերի, մոծակների և սև ուտիճների դեմ: Այն ունի կոնտակտային, ադիբային և մսացորդային ազդեցություն, ինչպես նաև վանող հատկություններ: Ծախսի նորմը՝ 5-30 գ/հա:



Ինչու՞ է հարկավոր հրաժարվել լյամբդա-ցիհալոտրինի օգտագործումից

Լյամբդա-ցիհալոտրինի ազդեցությունն ունենում է բացասական հետևանքներ՝ ինչպես սուր, այնպես էլ քրոնիկական ախտահարումներով: Սուր թունավորման հետևանքներից են՝ աչքերի խայթոցը, մաշկային ցաները, բշտիկների գոյացումը, կուրությունը, սրտխառնոցը, ոչ կարողիոզեն թոքային այտուցը, սրտանոթային համակարգի գործառույթի խաթարումը, կոման, ծանր մկանային ցնցումները, գլխապտույտը, փորլուծությունը և մահը:

Քրոնիկական ազդեցության հետևանքներից են՝ քաղցկեղը, բնածին արատները, վերարտադրողական խնդիրները, իմունոտոքսիկությունը, նյարդային և էնդոկրին համակարգերի գործառույթների խանգարումները:



ԶԳՈՒՇԱՅՈՒՄ

Վնասակար է՝ ներշնչելու դեպքում:

Խուսափե՛ք աչքերի, մաշկի կամ հագուստի հետ շփումից:

Թունաքիմիկատով աշխատանքն ավարտելուց հետո, ինչպես նաև ուտելուց, խմելուց, մաստակ ծամելուց կամ ծխախոտ օգտագործելուց առաջ մանրակրկիտ լվացե՛ք ձեռքերն օձառով և ջրով:



Աղտոտված հագուստը հեռացրե՛ք և լվացե՛ք առանձին՝ կրկնօգտագործումից առաջ:



Ինչպե՞ս հեռացնել լամբդա-ցիհալոտրինը՝ մաշկի հետ շփման դեպքում



Մաշկն անմիջապես լվացե՛ք առատ ջրով 15-20 րոպեի ընթացքում: Թունավորման դեպքում խորհրդատվության համար զանգահարե՛ք թունաբանական կենտրոն կամ դիմե՛ք բժշկի օգնությանը: Աչքերը բաց պահե՛ք և դանդաղ, նուրբ շարժումներով լվացե՛ք ջրով՝ 15-20 րոպե: Հեռացրե՛ք կոնտակտային ոսպնյակները, եթե առկա են, առաջին 5 րոպեից հետո, ապա շարունակե՛ք ողողել աչքերը:



Ազդեցությունը շրջակա միջավայրի վրա

Ցիհալոտրինը խիստ թունավոր է ձկների և ջրային անողնաշարավորների շատ տեսակների համար: Այս թունաքիմիկատը կարող է աղտոտել հողը, ջուրը, սիզամարգերը և այլ տիպի բուսականությունը: Վնասատու միջատներին ոչնչացնելուց բացի, ցիհալոտրինը կարող է թունավոր լինել մի շարք այլ օրգանիզմների, ներառյալ թռչունների, օգտակար միջատների և ոչ թիրախային բույսերի համար:

Ըստ տվյալների՝ թունաքիմիկատներն ազդում են հողում բնակվող անողնաշարավորների վրա տարբեր ձևերով՝ դրանց ուղղակի ոչնչացումից սկսած մինչև վերարտադրության, աճի, բջջային գործառույթի և տեսակների ընդհանուր բազմազանության կրճատում:



Մարդու առողջություն



Հող, ջուր, բուսականություն

Ցիհալոտրինի ազդեցությունը



Թռչուններ, ձկներ և այլ կենդանատեսակներ

Օգտակար միջատներ



Լյամբդա-ցիհալտորինի լայնածավալ օգտագործումը հանգեցրել է բաց ջրամբարների հատակային նստվածքներում մնացորդային քանակների կուտակման, որոնք թունավոր են ջրային օրգանիզմների, այդ թվում՝ ձկների և երկկենցաղների համար:

Աշխատավոր մեղուների մոտ լյամբդա-ցիհալտորինի կարճաժամկետ ազդեցությունը հանգեցնում է կյանքի տևողության կրճատման, սովորելու և հիշողության գործառույթի խաթարման, նվազեցնում է բնակատեղի վերադառնալու ունակությունը և ազդում մեղրատու մեղուների սովորելու և հիշողության հետ կապված երկու գենի դրսևորման մակարդակների վրա:

Հաշվի առնելով լյամբդա-ցիհալտորինի վտանգավորությունը մարդու առողջության և շրջակա միջավայրի համար, այն դիտարկվում է որպես թեկնածու՝ Ստոկհոլմի կոնվենցիայով արգելման ենթակա թունաքիմիկատների ցանկում ներառելու համար:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Բարձր վտանգավորության թունաքիմիկատների հիմնախնդրի դիտարկումը» ծրագրի շրջանակում:

«Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Շինարարների փող. 18, բն. 52
Էլ. փոստ՝ info@ruraldaf.am
Վեբ կայք՝ <http://www.ruraldaf.am>